կենդանութ. տեղւոյն ի ձեռն Սեղբեստրոսի եպիսկոպոսի Հռոմայ որ ի նմանէ ճգնեցեալ էր ի Սորակտին (var. Սերապտին եւ Սերապիտոն) լերանն. յորմէ եւ աշակերտեալ հաւատաց, զքահանայան ամենայն բառնալով Աստուծոյ յերեւացնորա, որպէս համառօտ առուցանէ քեզ Ագաթանգեղոս„։

զնա հանդերձ պատուով արասցես առ քեզ գալ։ Եթէ խրատու նորա անսասցես, ցուցանել քեզ կարասցէ առողջ բարեպաշտութեան, յորում լուսացեալ զայս վիրացն բացամարքեսցես, եւ ողջ եղեալ կենացն արժանասցիս․․․։

լուսոյն ի հոգեւոր առողջն զշնորհութիւն մեղաց քոց եւ զբժշկութիւն քո արժէոյն իքեն եւ կեանս եւ առողջութիւն քեզ տացէ․․․։

Այս համեմատական աղիւսակից տեսնում ենք, որ աւելի քան 160 դէպքում Ընդարձակ եւ Համառօտ վարքերը բառացի նմանութիւն ունին իրարու հետ՝ կրկնելով միեւնոյն խօսքերը. այդ թուից՝ միայն 1/3 դէպքում նմանութիւն ունի Խորենացու 83րդ գլուխը նոյն վարքերի համապատասխան հատուածների հետ, իսկ մնացեալ 2/3 դէպքում (շեղագրով շարուած խօսքերը) բոլորովին նման չէ նոցա։ Այս հանգամանքը՝ մեր կարծիքով, ցոյց է տալիս մի կողմանէ՝ մէկ վարքի անմիջական կախումն միւսից (եւ յատկապէս Համառօտինը Ընդարձակից) եւ միւս կողմանէ՝ Խորենացու գլխի կախումն միաժամանակ երկու վարքերից էլ։ Վերջին հետեւողութիւնը հաստատվում է նաեւ նորանով, որ "Հայոց Պատմութեան„ մեր ուսումնասիրած գլուխը 20 դէպքում[1] նմանութիւն ունի բացառապէս միայն Ընդարձակ վարքի հետ եւ 14 դէպքում[1] միայն Համառօտի հետ՝ չը հաշուելով վերոյիշեալ նմանութեան դէպքերը միաժամանակ երկու վարքերի հետ էլ։

(Մնացեալը գալ անգամ։) Գր. ԽԱԼԱԹԵԱՆՑ

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ Ի ԿԱՐԻՆ

(Շարունակութիւն)

### 33.

### ԺՈՂՈՎԱԾՈՅՔ

ԺԶ—ԺԷ դար։

*ԹՈՒՂԹ 269. էջ նշանակուած չէ: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18 սմ. երկ. 14 սմ. լայն. 6 սմ. հաստ.: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն՝ իւրաքանչիւրը 15×4.5 սմ., միջին լուսանցք 1 սմ., միջին բոլորգիր: — ՎԵՐՆԱԳԻՐ եւն կարմիր: — ԴԱՏԱՐԿ թուղթ 1 էջ: — ՋԱՐԴ, ՊԱՏԿԵՐ չունի: — ՏՈՂ 31: — ԳՐԻՉ՝ Եսայի աբեղայ: — ԺԱՄԱՆԱԿ, թուական անծանօթ:*

Կը պարունակէ Ա. Բառգիրք Եսայեայ Վ.ի.

1. Բառագիրքը՝ 53 թուղթ, ունի հինգ մաս. Ա. Հայերէն բառեր՝ 29 թուղթ. որու սկիզբը ստոր գրչէ "Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ սարգիս վա„ եւ վերջը "Եւ զեսայի գծող սորա յիշէ"։„ Բ. Բառք Եբրայեցի 11 թուղթ՝ որու վերջը "եւ զիս զանարժան աբեղայս զեսայիս յիշեա եւ դու յիշեալ լիցիս առ քո ամէն։„ Գ. Այս բառք Յունարէն է մեծ յայտնեալ. (մեծ մասը Յոյն-Հայերէն՝ ապագայ, բացարձակ, երդատացութիւն եւայլն) 4 թուղթ՝ որու տակ. "Քրիստոսի աստուծոյ մերոյ փառք։„ Դ. Բառք Գաղիանոսի բժշկապետի՝ 4 թուղթ։ Ե. Խառն բառեր 5 թուղթ։

2. Համանիշներ հինգ թուղթ. վերջը գրուած "Եւ քեզ փառք յաւիտեանս։„

3. Նշանագիր անուններ, Բառեր եւն. 16 թուղթ։ Ասոնց մէջ առաջին գրչէ. "Եւ զիս բազմամեղ ծառայս աստուծոյ զեսայի աբեղայս յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս տէր մեր միով աստուած ողորմիւ եւ աստուած ձեզ ողորմեսցի յիշողացդ ամէն։„ "Եւ զնուաստ գծող սորա զեսայի անարժան աբեղայս. յիշեցէք ի յաղօթս ձեր ով որ կարդայք եւ աւգտիք ի սմանէ թողութիւն խնդրեցէք ինձ եւ ծնողաց իմոց եւ որ զամէնն ասէն ամէն։„

Բ. Գործք Վարդանայ Վ.ի եւ այլն։

1. "Խնդիրք եւ հարցմունք միքայէլի անտիոքայ եպիսկոպոսին ի մեղաւորէս վարդանայ։ 19 թուղթ՝ որու վերջը„ վասն գժուխոցն եւ անքուն որդանցն, զի չէ սուտ որպէս կարծեն ոմանք

---

[1] ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՐՔ

Ի գաւառին Բիւթեայ
Առ ի Հեղինեայ

Ցնծացեալ զնա պարգեւօք
Այսոր յաղթեալ
Յաղթելոյ պատերազմացն

Ինքն եղեւ. բարեպաշտութեամբ
Ըստ բոլորն ընկալեալ մարմնոյ։
Ով կարացին օգնել նմա
Քուրմք սնոտի
Բազմութեան մանկանց
Կոխանապատ ողորմելք
Քան զի... փրկութեան
Սեղբեստրոս եպիսկոպոս
Ի լերին Սերապտինոս ճգնեցաւ։

ՀԱՄԱՌՕՏ ՎԱՐՔ

Ընդ ժամանակս ըստ այն.
Բազում հրապարակաւ ի բոլոր երկրի
Առաքս հոյլածոս եկեղեցւոյ
Բազում եղեն վկայք
Զբոլոր մարմինն թ․․․ կառախանեք
Ի վերայ հրապարակաց
Ջինեալ յառաջնոս եւ լերն արեամբ լուանալ։
Եւ արբեալ ի քէն
Զբժշկութիւն։

digitised by A.R.A.R.@

մեղաւորըն. այլ սոսոյց է աստուծոյ վկայութեանցն եւ որբոցն նորա զոր մեղաւորս վարդան յաստուածաշունչ գրոց յարմարեալ գրեցի ով. յաղաչելոյ եւ ի խնդրոյ շնորհաղարգ (մէկ տող քերուած)։"

2. Վարդանի ուրիշ գրուածները, Հաւատամք. հաւատով խոստովանիմ. Արիստոտէլի ստորոգութիւնք. Յովհաննու որոտնացոյ տիեզերալոյս վարդապետի արարեալ ի բան առաքելոյն որ ասէ թէ մարդով եղեւ մահ եւ մարդով եղեւ յարութիւն մեռելոց։ Նախաց գրոց Պաւլթի անյաղթ փիլիսոփայի. հարցմունք, քարոզ եւն։ Որու վերջը "Եւ զիս պատուապեալ մեղաւք գծող գրոյս զեսայի աբեղայս յիշեսջիք ընթերցողք ի սուրբ յաղաւթս ձեր։"

3. "Տիեզերալուր մեծ բարունապետին Յովհաննու արարեալ ի մեկնութենէն աւետարանին մաթէի։" Որու վերջը պակաս է։

---

## 34.

### ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԵ—ԺԶ դար։

*ԹՈՒՂԹ՝ 266: — Էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 18 սմ. երկ. 13 սմ. լայն. 4.5 սմ. հաստ.: — ՆԻՒԹ՝ Թուղթ՝ ողորկ, Թուխ, փայլուն: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միջին բոլորգիր: — ՎԵՐՆԱԳԻՐ եւն կարմիր: — ԶԱՐԴ, ՊԱՏԿԵՐ չկայ: — ՏՈՂ՝ 26: — ԴԱՏԱՐԿ Թուղթ՝ 8 էջ: — ԳՐԻՉ եւ ԺԱՄԱՆԱԿ անծանօթ: Սկիզբէն եւ վերջէն երկերկու Թուղթ մագաղաթ՝ կազմողէն դրուած. սկիզբէն եւ մէջերէն մաս մը պակաս:*

Մատեանս կը պարունակէ 1. Կէորգէ Աղէքսանդրացւոյ թուղթ եւ խօսք ի սուրբ աստուածածին։ 2. Մեկնութիւն հանգանակի. 3. Թէոդոտի եպիսկոպոսի Անկիւրիոյ խօսք յաւուր ծննդեան փրկչին, ի յայտնութիւն եւն։

Յիշատակութիւն ոչ մի տեղ. սակայն լուսանցքի վրայ երկու տեղ գրուած. "Գիտցիր տէր իմ զի յաւրինակս թուխս մի պարապ էր թաւղած." "կարդա սիրով դու զայս եղբայր սա մրգրիտ յոս։"

---

## 35.

### ԲԱՌԱՐԱՆ

ԺԷ—ԺԸ դար։

*ԹՈՒՂԹ՝ 226: — Էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15 սմ. երկ. 10 սմ. լայն. 4.5 սմ. հաստ.: — ՆԻՒԹ՝ Թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր եւ յստակ: — ԳԻՐ նոտր: — ՎԵՐՆԱԳԻՐ եւն կարմիր: — ՏՈՂ՝ 21: — ՊԱՏԿԵՐ, ԶԱՐԴ եւն չկայ: — ԴԱՏԱՐԿ Թուղթ՝ վերջէն 8 էջ: — ԳՐԻՉ, ԺԱՄԱՆԱԿ եւն անծանօթ:*

Առաջին էջին վրայ կարմիր մելանով գրուած է. "Այս բանք են քերթողական վասն չափոյ համերական տառիցն վասն զի քերթողական արհեստքն չափաբեր կամ չափով վարին. եւ են որ գեղ (չունին) որով ճարտասանքն վարին ...խապէս փոխաբերին... դու ճարտասանիցն ի հարկէ հոգնահամար եղանիլ. իսկ թէ գլունաց բառն խնդրես, որ սկիզըն էր եղեալ. այն եւս խառնեալ է յայս. նաեւ զբառ աստուածաշնչին, որ յետոյ հաւաքեցաւ։"

Բառարանէն մէկ էջի վրայ սա ոտանաւորը բոլորգիր.

Թէ շատ կաֆայ չափես ի ձ(ախ)
Գտցես ի յաջ գայ խիստ յաճախ։

Բաժնէ ջանիւ բան շաղկ'պած
Կիւս զգիտ վճկիդ փակած։

Կամքդ մշակ ծառայ դատես.
Կանխեալ զանդէնն վայելես։

Ի սպառ ժտիս լաւ ընդ կոծով.
Ընդ առաջի խաչիս թռչիս կառով։

Սաղմոս սաս մշտահաձայն։
Առաջնապահ առ ճղաձայն։

Փրփրացաւ ցաւ ցաւալք։
Ցաւ քարացաւ աւարցաւ։

Անկէ վերջ "բառ Գաղիանոսի բժշկին." "Թարգմանութիւն գեղոց. զոր ընտրեալ են իմաստունքն կարգել" յայլ լեզուաց ի մերս։" "Անուանք ԻԴ. մարգարէիցն" "Այս են լեզուք ՀԲ. ազգաց." "իսկ որ դպրութիւն գիտէ եւ գրով վարի Բժան ազգէ." "Ազգ որդոյն Նոյի." "Յաղագս բնութեան մարդկային մարմնոյ." "Յաղագս պատկերացուցութեան։"

Վերջին 4 պարապ էջերուն վրայ Զօն Նուբրողէն Տիգրան Մ. Գէորգեան. մէկ յիշատակարան' որ է հետեւեալը.

"Յիշատակարան գրքոյս Աբասոիս ի գիւղն խօրւանացի տէր յարուգինի որդոյ ավետիք ավետիք որդի տիրացու Թադէոսին։"

Օտար գրչէ "երբեակ երիցըս վեցեկի, լեալ ըստ թուոյ այբ եւ բենի։ Այս են երկու տասան վարդապետք հայոց։ Ա. Դիոնեսիոս։ Բ. Յըուէթէոս։ Գ. Սեղբեստրոս։ Դ. Աաթանաս։ Ե. Կիւրեղ։ Զ. Եփրեմ։ Է. Բարսեղ։ Ը. Գրիգոր Նիւսացին։ Թ. Գրիգոր աստուածաբ.։ Ժ. Եպիփան։ ԺԱ. Յոհան ոսկեբեր։ ԺԲ. Կիւրեղ։" Ասոր տակ "Աղօթք վարշամակ աւրհնելոյ....։"

(Շարունակելի։) Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ

## ԳՐԱԿԱՆ

---

### ԱՆՏԻՊԱՏԱԿ ՀԱՅ ԱՇՈՒՂ ՄԸ

Իրենց կենաց վերաբերեալ համառօտ պատմութիւններով եւ իրենց երգերովը, Հայ-Եւրոպացիներու եւ Հայ-Աշուղներու լիակատար մի ցուցակն հաւաքել ու կազմել, շատ հետաքրքրական

digitised by A.R.A.R.@